



NA-2351

603

Ա Ր Ա Ր Ա Տ


ԹԻԻ Ա. — ՇՐՋԱՆ ԻԱ.

1888

ՏԱՐԻ ԻԱ. ՅՈՒՆՈՒԱՐ 31

1 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1888.

Արարատ ամառադիրը մտնում է իւր ԻԱ տարեշրջանը։ Ամեն հրատարակութիւն ծառայում է մի նպատակի, որին հասնելու համար հետեւում է մի ծրագրի, որ բովանդակում է իւր մէջ թէ նպատակն, որին ձգտում է նա և թէ այն միջոցներն, որոնց միջնորդութեամբ աշխատում է նա հասնել այդ նպատակին։ Արարատն, իբրեւ Սուրբ Աթոռոյ, հայ ազգի մտաւոր և բարոյա-յական կենդրոնի, բերան ունէր և ունի իրան նպատակ այդ կենդրոնի շուրջ խմբուած հայ ազգի ամեն դասակարգերի, մանաւանդ եկեղեցական դասի, մտաւոր և հոգեւոր զարգա-ցումն։ Մանաւանդ խօսքը դրինք եկեղեցական դասի առաջ, որովհետեւ այդ դասն է, որ կոչուած է իւր պաշտօնով լինելու ամբողջ հայ ազգի հոգեւոր հայրն, սորա բոլոր պարտականոթիւններով։ Բայց կա՞ր արդեօք աշխարհումն աւելի բար



ք-ի բայց և քաղցր պարտականութիւն, քան հայրութիւնը: Հայ եկեղեցական դասը այդ հայրական պարտականութիւնը ստանձնել է և կատարել յընթացս շատ դարերի, աւելի ծանրութեան քան քաղցրութեան պտուղը վայելելով. որովհետեւ արտաքին հանգամանքները միշտ ծանրացած են եղած հայ ազգի վերայ և շատ քիչ ժամանակամիջոց են տուած նրան հանգստութեան և խաղաղութեան, որ կարեւոր է կանոնաւոր մտաւոր և բարոյական կրթութեան համար: Բայց և այդ կարճ ժամանակամիջոցներէն էլ հայ եկեղեցական դասը չէ զլացել իւր հայրական պարտականութիւնը դէպի ազգը կատարելու համար միջոցները ձեռք բերել: Ս. Մեսրոպիի և Թարգմանչաց դարն առաջին ապացոյցն է հայ եկեղեցական դասի հոգացողութեան ազգի մտաւոր և հոգեւոր պիտոյից վերայ, հոգացողութեան, որոյ պտուղներն երեւցան հինգերորդ դարու կիսումն, Յազկերտի բնութեան ժամանակ: Այսպէս և ապագայ դարերում հայ եկեղեցական դասն ըստ ներման հանգամանաց և միջոցների, միշտ ձգտել է իւր հայրական պարտքը կատարելու, Յոռետես պէտք է լինել ասելու համար, որ հայրը չէ ցանկանում իւր զաւակաց լաւութիւնը, բաղաւորութիւնն և երջանկութիւնը, բայց ամեն հօր, մանաւանդ հոգեւոր հօր պարտքը սրբութեամբ կատարել կարողանալու համար անհրաժեշտ է նրան մտաւորապէս և բարոյապէս բարձր դիրք ունենալ և հմուտ լինել այն միջոցներին, որոնց դործագրութիւնը պէտք է առաջնորդեն նորա զաւակաց դէպի բարօրութիւն և երջանկութիւն: Հայ եկեղեցական դասն, այս գաղափարին հետեւելով, որ պահանջումէ նրանից եւ քրիտոսոնէական մարդապետութիւնն ասելով քննեցէք զգիրս, յար և միշտ անձնատուր եղել է գրոց քննութեան և սորա գիտութեամբ կատարել է իւր հոգեւոր հայրութեան պարտականութիւնն երբեմն եռանդով և երբեմն դանդաղկոտութեամբ, նայելով թէ արտաքին անյաջող պայմաններն որքան թոյլ են տուել նրան հանգիստ և խաղաղութիւն վայելելով ձեռք բերել գրոց գիտութիւնն, իբրեւ ղեկավար և օգնական իւր սարտակաւորութեան: Այդ անհրաժեշտ գիտութեանց ալբիւրներ եղած են այդ եկեղեցական դասի համար վանքերը, դպրեւանքերը, հայպետանոցներն և ի վերջոյ շատ կրօնաւոր և աշխարհիկ ան-

Հատների խցերն, որոնց միջից գիտութեան լոյսը փայլել է, եկեղեցականների համար, որոնք այդ լուսով առաջնորդել են իրանց հոգեւոր զաւակներին դէպի երջանկութիւն, որ հետեանք է բարոյական և հոգեւոր կրթութեան:

Երբ այս լոյսը պայծառ է եղել, հայ ազգի վիճակն էլ աւելի երջանիկ և նախանձելի է եղած, իսկ երբ արտաքին հանգամանքներից այս լոյսը աղօտացել է, ազգի վիճակն էլ նոեմացել է և խեղճ ու թշուառ դրութեան մէջ է ընկել նա: Հայ եկեղեցական դասին, իւր հոգեւոր հայրութեան պարտքը կատարելու մէջ, գլուխ և ղեկավար եղած են միշտ ազգիս հայրապետներն, իբրեւ պետ եկեղեցականաց, իբրեւ մեծ հայր ազգիս: Սոքա, որքան ներել են հանգամանքներն և միջոցները, միշտ աշխատել են համեմատ ժամանակի պահանջմանց, պաշտպանել և խնամել, թէ այն սրբաւայրերն, որոնք լուսատու ազդեւորներ են եղել հայ եկեղեցական դասին՝ այն է վանքերն իրանց դպրոցներով, և թէ մասնաւոր անհատներին, որոնք իրանց նուիրել են գիտութեան ու կրթիչ և դաստիարակիչ են եղած իրանց գիտութեամբ հայ եկեղեցականաց և աշխարհականաց:

Մարդոց կեանքն ու վիճակն աշխարհում միշտ փոփոխութեան է ենթարկուած, ուստի և այն միջոցներն ու եղանակներն, որով կանոնաւորուում են այդ կեանքն ու վիճակը նոյնպէս փոփոխուում են, թէև ոչ ըստ էութեան, այլ միայն ձևով: Մարդու ձգտումն եղել է և է միշտ առաջ երթալ, կատարելագործուել, հասանել երջանկութեան, ազգի այս ձգտման ղեկավարն եղած է երբեմն հայ եկեղեցական դասն իւր վանքերով և սոցա մէջ եղած դպրոցներով և ձեռքով արտագրուած գրքերով: Ժամանակը փոխուեցաւ և իւր պահանջներն արու: Նա պահանջեց, որ եկեղեցական դասի հետ և աշխարհականք ևս հոգան և մտածեն իրանց մտաւոր ու հոգեւոր պիտոյից համար և բոլոր ծանրութիւնը միայն եկեղեցական դասի վերայ չթողուն, որոյ համար ժամանակի պահանջած բեռը շատ ծանր է և անտանելի: Եւ ահա հայ եկեղեցական դասն, իւր հայրապետն առաջնորդ և ղեկավար ունենալով, հրաւիրեց և իւր, հօտին, մասնակցելու ընդհանուր ազգի մտաւոր և հոգեւոր աւաւորութեան, Հայ եկեղեցական դասն իբրեւ առաջն, և ղեկավար, աշխարհիկ դասն էլ իբրեւ գործակից, ձեռք ձ

և տուած սկսան մշակել ընդհանուրի համար: Նախկին վան-
 քերի փոխանակ բացուեցան հոգևոր և ծխական դպրոցներ,
 քաղաքներում և գիւղերում: Նախկին ձեռագործների փոխա-
 նակ տարածուեցուն տպագրած գրքեր, տպագրական արհեստի
 շնորհիւ: Աշխատանքը թիթեացաւ և ընդարձակուեցաւ. ար-
 դիւնքն էլ հետեւաբար պէտք է մեծ և աւելի լինի: Ամեն գործ-
 ժամանակի ընթացքում կատարելագործուում է, փորձերի և
 միջոցների աւելանալից: Ս. Աթոռս, իբրեւ ազգի հոգևոր և
 մտաւոր կենդրոն ի վաղուցհետէ ունեցաւ իւր ժառանգաւո-
 րաց դպրոցն և տպարանն իբրեւ գործիքներ գիտութեամբ ճո-
 խացած հոգևոր հայրեր հայ ազգին տալու համար: Ժառան-
 գաւորաց դպրոցը փոխուեցաւ ճեմարան, որ աւելի ընդարձակ
 գիտ. լթիւն է տալիս. իսկ տպարանից, որ ժամանակ առ ժա-
 մանակ հրատարակում էր կրօնական և բարոյական բովան-
 գակութեամբ գրքեր, սկսաւ ազգի մէջ տարածուել պարբերա-
 կան հրատարակութիւն—Արարատն, որ շարունակաբար հո-
 գևոր կերակուր պիտի մատակարարէր հայ ազգին, մանաւանդ
 Հայ եկեղեցական դասին. որ օտ ևս իւր կողմանէ միշտ կազ-
 դուրուած ուժով խնամէր իւր հօտը, Պարբերական Արարատն
 հանգուցեալ երջանկայիշատակ Գէորգ Գ. Կաթողիկոսի ջա-
 նիւք և կամքով սկսաւ հրատարակուել, նորա խմբագրութիւնը
 Ս. Աթոռոյս միաբանութեան վերապահուելով: Նա իւր ծաղկա-
 փթիթ պոստանեկութեան հասակն անցնելից յետ բնականա-
 բար պէտք է մոռնէր աւելի արբուն հասակն, որովհետեւ իւրա-
 քանչիւր ժամանակ իւր պահանջն ունի և իւրաքանչիւր հա-
 սակ էլ իւր տալիքն ունի. ուստի և Արարատից էլ աւելի պա-
 հանջ ունի ներկայի իրաւամբ: Ահա այն պահանջն իրագործե-
 լու համար: Նորին Յօռութիւն, ներկայ Հայրապետն ամենայն
 Հայոց Տէր Մակար, արժան և անհրաժեշտ համարեց ընդարձա-
 կել Արարատի էջերն և նրան աւելի արդիւնաւոր անել, որոյ
 համար հրաւիրեց և Հայ ազգի մէջ գտանուող իւր բանասէր ու-
 սումնական և գիտնական աշխարհական զաւակունքն էլ, գոր-
 ծակցելու և աշխատակցելու Ս. Աթոռոյս միաբանութեան
 հետ, որոյ վերայ գլխաւորապէս ընկնում էր ցայժմ Արարատի
 հրատարակութեան հոգոն ու բեռը:

Խմբագրութիւնս կ'յուսայ, որ Մայր Աթոռոյս նշանակու-

թեան, հոգեւոր ազդեցութեան, ազգի մտաւոր և բարոյական կեանքին զարկ և ուղղութիւն տալու ձգտման նախանձախնդիր նորա բանասէր զաւակունք չեն զլանալ իրանց ազգային պատմութեան, գրականութեան, եկեղեցական և բարոյական հմտութեանց լումայն Ս. Աթոռոյս բերան՝ Արարատի միջոցով ձգել Հայ ազգի ընդհանրութեան գանձարանը: Խմբագրութիւնս միշտ լաւատես գոլով ազգիս բանասէրների վերաբերմամբ, յուսով կշարունակէ իւր գոյութիւնն և կյարատեւի անշուշտ ի շնորհս բանասիրաց և յօգուտ հայ ազգի ընդհանրութեան, օր աւուր ջանք անելով ընդարձակելու իւր գործունէութեան շրջանը:

ԿՐՕՆԱԿԱՆ

Ե Ձ Մ Ի Ա Մ Ի Ն.

Ա.

Արտաքին և նիւթական առարկաներ չեն մեր բանական կուրորութեանց նպատակը, այլ ներքին և հոգեկան առարկաներն են մեր պահանջածները. և երբ բնազանցական և բարոյական և կրօնական սկզբունքներ կորոնեմք, կը պարտաւորուիմք կարծեաւ բանական թափանցիկութիւն մը ենթադրել ամեն առարկայի վրայ, և երեցածէն անդին եղածը տեսնել, և արտաքին և նիւթական իրերուն՝ ներքին և հոգեկան իմաստն ու նպատակը իմանալ: Այդ մեծ ճարտարութեան շնորհիւ մեք կիջնեմք մեր հոգեկան բարձրութենէն մինչև նիւթական առարկաները, և կը բարձրանամք մեր նիւթական ստորնութենէն մինչև հոգեկան առարկաները. և այդ իմացական ելև էջին մէջ կը պահեմք մեր հաստատուն ուղղութիւնը, և կը գտնեմք մեր մտաւոր դադարման ծանրակէտը:

Բնազանցական և բարոյական և կրօնական, և թէ կամեհամք, ուսումնական և ազգայնական և եկեղեցական ծանր գաղափարներ կը գրաւեն ամեն Հայուն մտադրութիւնը: Ոչ բարձրաստիճան եկեղեցական, ոչ բարձրապաշտօն աշխարհական, բարձրահմուտ ուսումնական լինել պէտք է՝ ազգին շուրջ գործովն զբաղելու համար: Ուլ որ մարմնոյ մը անգ